

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՍ ՀԱՄԱՑՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

22 հունվարի 2015 թվականին կայացավ Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի ղեկավարի 2014 թվականի տարեկան հաշվետվությունը: Հաշվետվությանը ներկա էին Հ.Հ. Արմավիրի փոխարգպետ՝ Դավիթ Սամոնյանը, Ջրառատ համայնքի ավագանու անդամներ՝ Արմեն Պողոսյանը, Սարիբեկ Բարսեղյանը, Միհրան Բարուջյանը, Հովհաննես Խաչատրյանը, Մերոբ Մելքոնյանը, Դավիթ Սարգսյանը, Գևորգ Մելքոնյանը և Ջրառատ համայնքի 71 բնակիչներ: Ջրառատ համայնքի ղեկավար Սամվել Գալստյանը հանգամանալից ներկայացրեց 2014 թվականի տարեկան տարեկան հաշվետվությունը: Ջրառատ համայնքի ավագանու անդամները շնորհակալ եղան գյուղապետի 2014 թվականի աշխատանքից համայնքի ղեկավար՝ Սամվել Գալստյանին համայնքում կատարած աշխատանքների նշելով որ աղբաթափությունը կատարվում է պատշաճ կերպով և 2014 թվականի բյուջեն 94,1 % կատարելու համար: Համայնքի բնակիչ՝ Դավիթ Սարգսյանը հարց բարձրացրեց 2015 թվականի ճանապարհների վերանորոգման, ոռոգման ջրերի հիմնախնդրի վերաբերյալ: Համայնքի ղեկավար՝ Սամվել Գալստյանը պատասխանելով բնակչի հարցին ասաց, որ այս տարի այդ հարցը լուծվելու է նախորոք պետք է դիմեմ մարզպետին գրելու եմ տրանսպորտի նախարարին: Ջրի ոռոգում<<Այդրլիճ>> ՋՕՄ-ի ղեկավարությունը խոստացել են կարգավորել ջրի հարցը: Բնակիչներից հարց բարձրացրին բուժ. Ամբուլատորիայի համար նոր շենք կառուցման մասին:

Ջրառատ համայնքի ղեկավար՝



Ս.Գալստյան

Արձանագրությունը կազմեց Ջրառատ համայնքի
աշխատակազմի քարտուղար՝

Մ. Առաքելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

22. հունվարի 2015թ.

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ-Ի ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գործավարություն

2014թ. -ի տարվա ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 91 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 575 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 177 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 8 որոշում: Արձակվել է 69 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն

2014 թ.-ի եկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին զուգարել է 4 արտահերթ և 6 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է բյուջեյի փոփոխություններ և ազատ միջոցների բաշխում: Ավագանու քննարկման են ներկայացվել 77 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները: 2014թվականի մարտի 31-ի ցրտահարությունից տուժված 20 ընտանիքների ջրի և հողի վարձը կառավարությունը հատկացրել է 72000հազ. դրամ հողի և 552,390 հազ դրամ ջրի հարկերը:

3.Գյուղատնտեսության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են՝

Բնակավայրային նշանակության հողեր -320հա.

Գյուղ. նշանակության հողատարածք -564 հա, որից՝

Խաղողի այգի -5.1 հա ստացել ենք հաշվետու տարում 1000,0ցենտ բերք

Պտղատու այգի -14.8հա ստացել ենք 1978,0ց. բերք

2013 թվականին աշնանը կատարվել է 20.86հա հացահատիկի ստացել ենք 680,0ց. բերք 7,0հա բազմամյա խոտհարքներ, լոբի 8հա 280,0ց. բերք, կարտոֆիլ 30հա 3900,0ց.բերք բոստանային կուլտուրաները 36հա 17600,0 ց .բերք, վարունգ 52հա 39500,0ց. բերք, լոլիկը 23հա 17500,0ց. բերք, սեղանի ճակնդեղ 1հա ստացվել է 380,0ց.բերք և բանջարեղեն 18 հացանք ստացվել է 16400,0ց. Բերք:2014թվականին աշնանացան ցորեն ցանվել է 5,4 հա:

Անասնազլխաքանակ

Խոշոր եղջերավոր անասուններ 305 գլուխ, որից՝ կովեր 102 գլուխ

Մանր եղջերավոր անասուններ 96 գլուխ, ոչխար, որից՝ մայրեր 19

4. Հողի հարկ և գույքահարկ.

2014 թվականին ընթացքում համայնքային բյուջեով նախատեսվել է 4824,6 հազար դրամ հողի հարկ: 01.07.2014 թ.-ի դրությամբ համայնքի հողօկտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 4399,5 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 91,1 տոկոսը:
Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 6100,0 հազար դրամ: 01.07.2014 թվականի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 3676,3 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 60,3% -ը :2014 թվականի բյուջեով նախատեսվել է 25,5 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ մուտք 01.07. 2014 թվականի մուտք է եղել համայնքի բյուջե 17,9 հազ.դրամ որը կազմում է տարեկան 18,7%; 2014 թվականին բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 42068,8 հազար դրամ , որը ֆինանսավորվել է 100 % ով, համայնքի վարչական տարածքում գտնվող 2014թ սեփական եկամուտները նախատեսվել են 12012,21 հազար դրամ:31.12.2014թվականի դրությամբ սեփական եկամուտները փաստացի մուտքերը կազմել են 8684,6 հազար դրամ, սեփական եկամուտները կատարվել է 72,3%: Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարը նախատեսվել է 990,2 հազ. դրամ,գանձվել է մուտք է եղել 588,1 հազ.դրամ: 2014 թվականի բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 59,4%-ով: Օրենքով և իրավական ակտերով մուտք է եղել համայնքի բյուջե 59,1 հազար դրամ, համայնքի բյուջե մուտք է եղել սուբվենցիաներ 158,4 հազար դրամ:

Ծախսեր

Ջրառատի գյուղապետարանը 2014 թվականի ընթացքում կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարել է ընթացիկ աշխատավարձ 21074,2 հազար դրամ
2. կատարել է թերթի բաժանորդագրության ծախս - 48,8 հազար դրամ
3. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է 188,7 հազար դրամ
4. համակարգչային ծառայության համար փոխանցվել է -170,8 հազար դրամ
5. փոխանցվել է էլեկտրոնների գիայի գումար -4188,0 հազար դրամ
6. փոխանցվել է գազի օկտագործման գումար - 245,0 հազար դրամ
7. միջոցառումների համար վերջին զանգի, դպրոց հաճախող առարին դասարանցիների և կանաց տոնի համար 1000,0 հազ.դրամ
- 8 Օաղկեպսակների համար - 240,0 հազար դրամ
- 9 Գրենական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է -500,0 հազար դրամ
10. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն -1355.0 հազար դրամ:
11. Աղբահանություն համար 2800,0 հազ. դրամ:
12. ճանապարհների խճապարում և հարթեցում 980,0 հազար դրամ:

13. Տեղեկատվական ծառայություն 56,2 հազար դրամ:
14. կենցաղ նյութերի համար ծախսվել է 570,0 հազար դրամ:
15. մանկապարտեզին փոխացվել է սուբսիդյա 14256,9 հազար. դրամ:
16. կապի ծառայություն -547,3 հազար դրամ:
17. տրանսպորտի սարքավորումներ 411,3 հազար դրամ:
18. տրանսպորտի նյութեր- 999,0 հազար դրամ
19. ներքին գործողումներ -364,0 հազար դրամ:
- 21 հուշարձանի վերանորոգում -256,0 հազար դրամ:
22. ներկայացուցչական ծախսեր -660,0 հազար դրամ:

Ազգաբնակչություն.

- ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 3174 մարդ:
2014 թվականի ընթացքում Ջրառատ համայնքում ծնվել է 19 երեխա, գրանցվել է 12 մահ:
Ընտանեկան նպաստ ստացողներ 47 ընտանիք
Համայնքում թոշակառուները 306 հոգի են:
5, Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց 308 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 60 երեխայով և 11 աշխատողով:

6 Մշակույթ

Համայնքը ունի մեկ մշակութի տուն 6 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 35 երիտասարդ և սպորտի խմբակներ բոնցկամարտի, արմֆայնդիկ, մարտեր առանց կանոնների և ծանրամարտ:

Երախաները մասնակցել են մրցումների և առաջնային տեղեր են զբաղեցրել:

7 Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 11 աշխատողով:

8 Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2014 թ-ի ամառային և ձմեռային զինակոչը և կատարվել է պլան առաջադրանքը:

9. Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են Հ. Հ. պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության անկախության տոնը, մայիսի 9-ի Արցախի պատերազմի հաղթանակի օրը, բերքի տոնը, Հայաստանի Հանրապետության սահմանադրության տոնը:

Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգում << ասֆալտապատում>>, որը կկազմի մոտ 450,0 միլիոն դրամ:

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 20.0 միլիոն դրամ

գ) Մշակույթի տուն- 150,0 միլիոն դրամ:

դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի արտիզյան ջրհոր հորատելը:

ե) Բժշկական ամբուլատորիայի նոր շենքի կառուցում- 30,0 միլիոն դրամ:

Ջրառատի գյուղապետ՝



Ս. Գալստյան